ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/07

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ս. Ավագյանի (պետական գրանցման վկայականի համար 44.110.947443)

Քննելով «Գլաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՎՁՄԳՄԴ ՊՈԱԿ ԳՀԱՊՁԲ-20/01» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ի կողմից 14.01.2020թ. ներկայացված և 15.01.2020թ. վարույթ ընդունված բողոքը (այսուհետ՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/07 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 14.01.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Լիդեր Կոմպլեքս» ՍՊ ընկերությունը ի թիվս այլ մասնակցների, մասնակցության հայտ է ներկայացրել պատվիրատուի կողմից հայտարարված թիվ «ՎԶՄԳՄԴ- ՊՈԱԿ ԳՀԱՊՁԲ-20/01» ծածկագրով գնանշման հարցումի ձևով սննդամթերքի մատակարարման գնման ընթացակարգին (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

24 դեկտեմբերի 2019թ. հայտերի բացման նիստում գնահատող հանձնաժողովը, հայտարարել է բոլոր մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները և դրանք գնահատել բավարար, այդ թվում նաև «Լիդեր Կոմպլեքս» ՍՊ ընկերության գնային առաջարկը: Այնուհետև հանձնաժողովը թիվ 1, 2, 3, 4, 5, 7, 9, 10, 12, 14, 15, 23 չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչել Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանին, իսկ թիվ 6, 8, 13, 16, 17, 19, 21, 22 չափաբաժիններով «Լիդեր Կոմպլեքս» ՍՊ ընկերությանը, առանց բացման նիտի արձանագրությունում ներկայացնելու գնային առաջարկները:

Գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով (հոտայսու նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով (հետայսու նաև՝ Կարգ) և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներով: Մասնավորապես, Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Իսկ Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հայտերի գնահատման իրավասությունը վերապահված է գնահատող հանձնաժողովին:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետում նշված է, որ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Օրենքի համաձայն որակավորվում են այն մասնակիցները, որոնց ներկայացրած հայտը ամբողջությամբ բավարարում է Օրենքի պահանջներին:

Գնահատող հանձնաժողովը դրական է գնահատել նաև Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանի կողմից ներկայացված հայտը այն դեպքում, երբ Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանի գնային առաջարկը սխալ է կազմված: Մասնավորապես՝ գնային առաջարկի ԱԱՀ-ի սյունակում նշված թիվը, որը պետք է կազմեր ինքնարժեք գումարած շահույթ ընդհանրական գումարի 20% -ը, պակաս է գրված բոլոր չափաբաժինների համար:

Նույն հրավերի համաձայն՝ եթե մասնակիցը ԱԱՀ վճարող է, ապա գնային առաջարկում պետք է նշվի ԱԱՀ-ի գումարը: Իսկ ԱԱՀ-ն հաշվարկվում է ինքնարժեք+շահույթ*20% -ով: Ռուզաննա Զաքարյան Ա/Ձ-ն թիվ 2 հավելվածով գնային առաջարկով՝ բոլոր չափաբաժիններով սխալ է հաշվարկել ՀՀ պետ. բյուջե վճարվելիք ԱԱՀ-ի գումարը: Նման պայմաններում ակընհայտ է, որ 6=3+4+5 , այսինքն ընդհանուր գինը պետք է հավասար լինի ինքնարժեք+շահույթ+ԱԱՀ չի համապատասխանում իրականությանը:

Ընկերությունը գտնում է, որ գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի արձանագրությամբ խախտվել է Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջը և ղեկավարվելով Օրենքի 46-րդ, 47-րդ, 48-րդ, և 50-րդ հոդվածի դրույթներով խնդրել է պարտավորեցնել «ՎՁՄԳՄԴ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին մերժել Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանի հայտն ամբողջությամբ:

«Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 20.01.2020թ. ժամը 11:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

3. «Գլաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Գլաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

«Գլաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 20.01.2020թ. ժամը 11:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2020/07 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2020/07 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Գլաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՎՁՄԳՄԴ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ են ներկայացրել «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ն և Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.09.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ թիվ 1, 2, 3, 4, 5, 7, 9, 10, 12, 14, 15, 23-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանը, իսկ թիվ 6, 8, 13, 16, 17, 19, 21, 22 չափաբաժիններով՝ «Լիդեր Կոմպլեքս» ՍՊ ընկերությունը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Լիդեր Կոմպլեքս» ՍՊ ընկերության 14.01.2020թ. բողոքը, «ՎՁՄԳՄԴ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը, Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանի կողմից ներկայացված հայտը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 30-րդ 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: ***Հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը:***

Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ***եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով.

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Ընթացակարգի հրավերի 5.2-րդ ենթակետով սահմանվում է, որ Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: ***<u>Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:</u>***

Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և տառերով և թվերով կամ միայն տառերով.

բ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին.

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված.

դ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումարները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը.

ե. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը.

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով :

«Գլաձոր միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՎՁՄԳՄԴ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/01» ծածկագրով գնանշման հարցում, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ են ներկայացրել «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ն և Ա/Ձ Ռուզանն Զաքարյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.09.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ թիվ 1, 2, 3, 4, 5, 7, 9, 10, 12, 14, 15, 23 չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանը, իսկ թիվ 6, 8, 13, 16, 17, 19, 21, 22 չափաբաժիններով՝ «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ն:

ՀՀ հարկային օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ***<u>ԱԱՀ-ն հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով,</u>*** բացառությամբ Օրենսգրքի 64-րդ և 65-րդ հոդվածներով սահմանված գործարքների ու գործառնությունների:

Այսպես՝ Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանի գնային առաջարկի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկի 1-3-րդ, 5-23-րդ չափաբաժինների մասով սխալ էր հաշվարկված տվյալ գործարքների գծով ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ-ի գումարը: Մասնավորապես՝

- 1-ին չափաբաժնի համար գնային առաջարկը կազմել է՝ ինքնարժեք՝ 57 800 ՀՀ դրամ, շահույթ՝ 4 420 ՀՀ դրամ և ԱԱՀ՝ 12 580 ՀՀ դրամ և ընդհանուր գին՝ 74 800 ՀՀ դրամ, այսպիսով՝ Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանը տվյալ գործարքի գծով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշել է 12 580 ՀՀ դրամ, մինչդեռ ԱԱՀ-ի գումարը տվյալ դեպքում կազմում է 12 444 ՀՀ դրամ (ինքնարժեք՝ 57 800+շահույթ՝ 4420 + ԱԱՀ՝ 20%): Այսինքն վերջինս գնային առաջարկի մեջ տվյալ գործարքի մասով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշել է 136 ՀՀ դրամ սահմանված չափից ավել:
- 2-րդ չափաբաժնի համար գնային առաջարկը կազմել է՝ ինքնարժեք՝ 41 650 ՀՀ դրամ, շահույթ՝ 2380 ՀՀ դրամ և ԱԱՀ՝ 8670 ՀՀ դրամ և ընդհանուր գին՝ 52 700 ՀՀ դրամ, այսպիսով՝ տվյալ գործարքի գծով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշվել է 8670 ՀՀ դրամ, մինչդեռ ԱԱՀ-ի գումարը տվյալ դեպքում կազմում է 8806 ՀՀ դրամ (ինքնարժեք՝ 41 650+շահույթ՝ 2380 + ԱԱՀ՝ 20%): Այսինքն վերջինս գնային առաջարկի մեջ տվյալ գործարքի մասով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշել է 136 ՀՀ դրամ սահմանված չափից պակաս:
- 3-րդ չափաբաժնի համար գնային առաջարկը կազմել է՝ ինքնարժեք՝ 14 400 ՀՀ դրամ, շահույթ՝ 1600 ՀՀ դրամ և ԱԱՀ՝ 4000 ՀՀ դրամ և ընդհանուր գին՝ 20 000 ՀՀ դրամ, այսպիսով՝ տվյալ գործարքի գծով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշվել է 4000 ՀՀ դրամ, մինչդեռ ԱԱՀ-ի գումարը տվյալ դեպքում կազմում է 3200 ՀՀ դրամ (ինքնարժեք՝ 14 400+շահույթ՝ 1600 + ԱԱՀ՝ 20%): Այսինքն վերջինս գնային առաջարկի մեջ տվյալ գործարքի մասով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշել է 800 ՀՀ դրամ սահմանված չափից ավել:

- 4-րդ չափաբաժնի համար գնային առաջարկը կազմել է՝ ինքնարժեք՝ 26 350 ՀՀ դրամ, շահույթ՝ 1275 ՀՀ դրամ և ԱԱՀ՝ 5525 ՀՀ դրամ և ընդհանուր գին՝ 33 150 ՀՀ դրամ, այսպիսով՝ տվյալ գործարքի գծով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը (ինքնարժեք՝ 26 350 +շահույթ՝ 1275 + ԱԱՀ՝ 20%): Այսինքն գնային առաջարկի մեջ տվյալ գործարքի մասով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը ճիշտ է հաշվարկված:
- 5-րդ չափաբաժնի համար գնային առաջարկը կազմել է՝ ինքնարժեք՝ 23 200 ՀՀ դրամ, շահույթ՝ 1520 ՀՀ դրամ և ԱԱՀ՝ 4880 ՀՀ դրամ և ընդհանուր գին՝ 29 600 ՀՀ դրամ, այսպիսով՝ տվյալ գործարքի գծով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշվել է 4880 ՀՀ դրամ, մինչդեռ ԱԱՀ-ի գումարը տվյալ դեպքում կազմում է 4944 ՀՀ դրամ (ինքնարժեք՝ 23 200 +շահույթ՝ 1520 + ԱԱՀ՝ 20%): Այսինքն վերջինս գնային առաջարկի մեջ տվյալ գործարքի մասով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշել է 64 ՀՀ դրամ սահմանված չափից պակաս:
- 6-րդ չափաբաժնի համար գնային առաջարկը կազմել է՝ ինքնարժեք՝ 19 550 ՀՀ դրամ, շահույթ՝ 1190 ՀՀ դրամ և ԱԱՀ՝ 3910 ՀՀ դրամ և ընդհանուր գին՝ 24 650 ՀՀ դրամ, այսպիսով՝ տվյալ գործարքի գծով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշվել է 3910 ՀՀ դրամ, մինչդեռ ԱԱՀ-ի գումարը տվյալ դեպքում կազմում է 4148 ՀՀ դրամ (ինքնարժեք՝ 19550+շահույթ՝ 1190 + ԱԱՀ՝ 20%): Այսինքն վերջինս գնային առաջարկի մեջ տվյալ գործարքի մասով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշել է 238 ՀՀ դրամ սահմանված չափից պակաս:
- 7-րդ չափաբաժնի համար գնային առաջարկը կազմել է՝ ինքնարժեք՝ 7200 ՀՀ դրամ, շահույթ՝ 600 ՀՀ դրամ և ԱԱՀ՝ 1200 ՀՀ դրամ և ընդհանուր գին՝ 9000 ՀՀ դրամ, այսպիսով՝ տվյալ գործարքի գծով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշվել է 1200 ՀՀ դրամ, մինչդեռ ԱԱՀ-ի գումարը տվյալ դեպքում կազմում է 1560 ՀՀ դրամ (ինքնարժեք՝ 7200+շահույթ՝ 600 + ԱԱՀ՝ 20%): Այսինքն վերջինս գնային առաջարկի մեջ տվյալ գործարքի մասով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշել է 360 ՀՀ դրամ սահմանված չափից պակաս:
- 8-րդ չափաբաժնի համար գնային առաջարկը կազմել է՝ ինքնարժեք՝ 52 800 ՀՀ դրամ, շահույթ՝ 3740 ՀՀ դրամ և ԱԱՀ՝ 10 560 ՀՀ դրամ և ընդհանուր գին՝ 67 100 ՀՀ դրամ, այսպիսով՝ տվյալ գործարքի գծով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշվել է 10 560 ՀՀ դրամ, մինչդեռ ԱԱՀ-ի գումարը տվյալ դեպքում կազմում է 11 308 ՀՀ դրամ (ինքնարժեք՝ 52 800+շահույթ՝ 3740 + ԱԱՀ՝ 20%): Այսինքն վերջինս գնային առաջարկի մեջ տվյալ

գործարքի մասով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշել է 748 ՀՀ դրամ սահմանված չափից պակաս:

- 9-րդ չափաբաժնի համար գնային առաջարկը կազմել է՝ ինքնարժեք՝ 129 500 ՀՀ դրամ, շահույթ՝ 11 200 ՀՀ դրամ և ԱԱՀ՝ 25 900 ՀՀ դրամ և ընդհանուր գին՝ 166 600 ՀՀ դրամ, այսպիսով՝ տվյալ գործարքի գծով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշվել է 25 900 ՀՀ դրամ, մինչդեռ ԱԱՀ-ի գումարը տվյալ դեպքում կազմում է 28 140 ՀՀ դրամ (ինքնարժեք՝ 129 500 + շահույթ՝ 11 200 + ԱԱՀ՝ 20%): Այսինքն վերջինս գնային առաջարկի մեջ տվյալ գործարքի մասով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշել է 2240 ՀՀ դրամ սահմանված չափից պակաս:
- 10-րդ չափաբաժնի համար գնային առաջարկը կազմել է՝ ինքնարժեք՝ 33 150 ՀՀ դրամ, շահույթ՝ 5525 ՀՀ դրամ և ԱԱՀ՝ 5525 ՀՀ դրամ և ընդհանուր գին՝ 44 200 ՀՀ դրամ, այսպիսով՝ տվյալ գործարքի գծով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշվել է 5525 ՀՀ դրամ, մինչդեռ ԱԱՀ-ի գումարը տվյալ դեպքում կազմում է 7735 ՀՀ դրամ (ինքնարժեք՝ 33 150 + շահույթ՝ 5525 + ԱԱՀ՝ 20%): Այսինքն վերջինս գնային առաջարկի մեջ տվյալ գործարքի մասով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշել է 2210 ՀՀ դրամ սահմանված չափից պակաս:
- 11-րդ չափաբաժնի համար գնային առաջարկը կազմել է՝ ինքնարժեք՝ 175 500 ՀՀ դրամ, շահույթ՝ 16 900 ՀՀ դրամ և ԱԱՀ՝ 35 100 ՀՀ դրամ և ընդհանուր գին՝ 227 500 ՀՀ դրամ, այսպիսով՝ տվյալ գործարքի գծով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշվել է 35 100 ՀՀ դրամ, մինչդեռ ԱԱՀ-ի գումարը տվյալ դեպքում կազմում է 38 480 ՀՀ դրամ (ինքնարժեք՝ 175 500 + շահույթ՝ 16 900 + ԱԱՀ՝ 20%): Այսինքն վերջինս գնային առաջարկի մեջ տվյալ գործարքի մասով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշել է 3380 ՀՀ դրամ սահմանված չափից պակաս:
- 12-րդ չափաբաժնի համար գնային առաջարկը կազմել է՝ ինքնարժեք՝ 102 000 ՀՀ դրամ, շահույթ՝ 9350 ՀՀ դրամ և ԱԱՀ՝ 20 400 ՀՀ դրամ և ընդհանուր գին՝ 131 750 ՀՀ դրամ, այսպիսով՝ տվյալ գործարքի գծով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշվել է 20 400 ՀՀ դրամ, մինչդեռ ԱԱՀ-ի գումարը տվյալ դեպքում կազմում է 22 270 ՀՀ դրամ (ինքնարժեք՝ 102 000 + շահույթ՝ 9350 + ԱԱՀ՝ 20%): Այսինքն վերջինս գնային առաջարկի մեջ տվյալ գործարքի մասով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշել է 1870 ՀՀ դրամ սահմանված չափից պակաս:
- 13-րդ չափաբաժնի համար գնային առաջարկը կազմել է՝ ինքնարժեք՝ 97 750 ՀՀ դրամ, շահույթ՝ 12 750 ՀՀ դրամ և ԱԱՀ՝ 19 500 ՀՀ դրամ և ընդհանուր գին՝ 130 000 ՀՀ

դրամ, այսպիսով՝ տվյալ գործարքի գծով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշվել է 19 500 ՀՀ դրամ, մինչդեռ ԱԱՀ-ի գումարը տվյալ դեպքում կազմում է 22 100 ՀՀ դրամ (ինքնարժեք՝ 97 750 + շահույթ՝ 12 750 + ԱԱՀ՝ 20%): Այսինքն վերջինս գնային առաջարկի մեջ տվյալ գործարքի մասով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշել է 2600 ՀՀ դրամ սահմանված չափից պակաս:

- 14-րդ չափաբաժնի համար գնային առաջարկը կազմել է՝ ինքնարժեք՝ 84 000 ՀՀ դրամ, շահույթ՝ 2000 ՀՀ դրամ և ԱԱՀ՝ 14 000 ՀՀ դրամ և ընդհանուր գին՝ 100 000 ՀՀ դրամ, այսպիսով՝ տվյալ գործարքի գծով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշվել է 14 000 ՀՀ դրամ, մինչդեռ ԱԱՀ-ի գումարը տվյալ դեպքում կազմում է 17 200 ՀՀ դրամ (ինքնարժեք՝ 84 000 + շահույթ՝ 2000 + ԱԱՀ՝ 20%): Այսինքն վերջինս գնային առաջարկի մեջ տվյալ գործարքի մասով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշել է 3200 ՀՀ դրամ սահմանված չափից պակաս:
- 15-րդ չափաբաժնի համար գնային առաջարկը կազմել է՝ ինքնարժեք՝ 78 000 ՀՀ դրամ, շահույթ՝ 14 520 ՀՀ դրամ և ԱԱՀ՝ 18 480 ՀՀ դրամ և ընդհանուր գին՝ 111 000 ՀՀ դրամ, այսպիսով՝ տվյալ գործարքի գծով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշվել է 18 480 ՀՀ դրամ, մինչդեռ ԱԱՀ-ի գումարը տվյալ դեպքում կազմում է 18 504 ՀՀ դրամ (ինքնարժեք՝ 78 000 + շահույթ՝ 14 520 + ԱԱՀ՝ 20%): Այսինքն վերջինս գնային առաջարկի մեջ տվյալ գործարքի մասով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշել է 24 ՀՀ դրամ սահմանված չափից պակաս:
- 16-րդ չափաբաժնի համար գնային առաջարկը կազմել է՝ ինքնարժեք՝ 8500 ՀՀ դրամ, շահույթ՝ 1700 ՀՀ դրամ և ԱԱՀ՝ 2550 ՀՀ դրամ և ընդհանուր գին՝ 12 750 ՀՀ դրամ, այսպիսով՝ տվյալ գործարքի գծով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշվել է 2550 ՀՀ դրամ, մինչդեռ ԱԱՀ-ի գումարը տվյալ դեպքում կազմում է 2040 ՀՀ դրամ (ինքնարժեք՝ 8500 + շահույթ՝ 1700 + ԱԱՀ՝ 20%): Այսինքն վերջինս գնային առաջարկի մեջ տվյալ գործարքի մասով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշել է 510 ՀՀ դրամ սահմանված չափից ավել:
- 17-րդ չափաբաժնի համար գնային առաջարկը կազմել է՝ ինքնարժեք՝ 6600 ՀՀ դրամ, շահույթ՝ 600 ՀՀ դրամ և ԱԱՀ՝ 1800 ՀՀ դրամ և ընդհանուր գին՝ 9000 ՀՀ դրամ, այսպիսով՝ տվյալ գործարքի գծով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշվել է 1800 ՀՀ դրամ, մինչդեռ ԱԱՀ-ի գումարը տվյալ դեպքում կազմում է 1440 ՀՀ դրամ (ինքնարժեք՝ 6600 + շահույթ՝ 600 + ԱԱՀ՝ 20%): Այսինքն վերջինս գնային առաջարկի մեջ տվյալ գործարքի մասով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշել է 360 ՀՀ դրամ սահմանված չափից ավել:

- 18-րդ չափաբաժնի համար գնային առաջարկը կազմել է՝ ինքնարժեք՝ 11 000 ՀՀ դրամ, շահույթ՝ 1000 ՀՀ դրամ և ԱԱՀ՝ 3000 ՀՀ դրամ և ընդհանուր գին՝ 15 000 ՀՀ դրամ, այսպիսով՝ տվյալ գործարքի գծով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշվել է 1000 ՀՀ դրամ, մինչդեռ ԱԱՀ-ի գումարը տվյալ դեպքում կազմում է 2400 ՀՀ դրամ (ինքնարժեք՝ 11 000 + շահույթ՝ 1000 + ԱԱՀ՝ 20%): Այսինքն վերջինս գնային առաջարկի մեջ տվյալ գործարքի մասով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշել է 600 ՀՀ դրամ սահմանված չափից ավել:
- 19-րդ չափաբաժնի համար գնային առաջարկը կազմել է՝ ինքնարժեք՝ 19 500 ՀՀ դրամ, շահույթ՝ 2100 ՀՀ դրամ և ԱԱՀ՝ 5400 ՀՀ դրամ և ընդհանուր գին՝ 27 000 ՀՀ դրամ, այսպիսով՝ տվյալ գործարքի գծով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշվել է 5400 ՀՀ դրամ, մինչդեռ ԱԱՀ-ի գումարը տվյալ դեպքում կազմում է 4320 ՀՀ դրամ (ինքնարժեք՝ 19 500 + շահույթ՝ 2100 + ԱԱՀ՝ 20%): Այսինքն վերջինս գնային առաջարկի մեջ տվյալ գործարքի մասով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշել է 1080 ՀՀ դրամ սահմանված չափից ավել:
- 20-րդ չափաբաժնի համար գնային առաջարկը կազմել է՝ ինքնարժեք՝ 3700 ՀՀ դրամ, շահույթ՝ 300 ՀՀ դրամ և ԱԱՀ՝ 1000 ՀՀ դրամ և ընդհանուր գին՝ 5000 ՀՀ դրամ, այսպիսով՝ տվյալ գործարքի գծով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշվել է 1000 ՀՀ դրամ, մինչդեռ ԱԱՀ-ի գումարը տվյալ դեպքում կազմում է 800 ՀՀ դրամ (ինքնարժեք՝ 3700 + շահույթ՝ 300 + ԱԱՀ՝ 20%): Այսինքն վերջինս գնային առաջարկի մեջ տվյալ գործարքի մասով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշել է 200 ՀՀ դրամ սահմանված չափից ավել:
- 21-րդ չափաբաժնի համար գնային առաջարկը կազմել է՝ ինքնարժեք՝ 82 600 ՀՀ դրամ, շահույթ՝ 7000 ՀՀ դրամ և ԱԱՀ՝ 22 400 ՀՀ դրամ և ընդհանուր գին՝ 112 000 ՀՀ դրամ, այսպիսով՝ տվյալ գործարքի գծով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշվել է 22 400 ՀՀ դրամ, մինչդեռ ԱԱՀ-ի գումարը տվյալ դեպքում կազմում է 17 920 ՀՀ դրամ (ինքնարժեք՝ 82 600 + շահույթ՝ 7000 + ԱԱՀ՝ 20%): Այսինքն վերջինս գնային առաջարկի մեջ տվյալ գործարքի մասով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշել է 4480 ՀՀ դրամ սահմանված չափից ավել:
- 22-րդ չափաբաժնի համար գնային առաջարկը կազմել է՝ ինքնարժեք՝ 108 000 ՀՀ դրամ, շահույթ՝ 2040 ՀՀ դրամ և ԱԱՀ՝ 2160 ՀՀ դրամ և ընդհանուր գին՝ 15 000 ՀՀ դրամ, այսպիսով՝ տվյալ գործարքի գծով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշվել է 2160 ՀՀ դրամ, մինչդեռ ԱԱՀ-ի գումարը տվյալ դեպքում կազմում է 2568 ՀՀ դրամ (ինքնարժեք՝ 108 000 + շահույթ՝ 2040 + ԱԱՀ՝ 20%): Այսինքն վերջինս գնային առաջարկի մեջ տվյալ գործարքի մասով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշել է 408 ՀՀ դրամ սահմանված չափից պակաս:

- 23-րդ չափաբաժնի համար գնային առաջարկը կազմել է՝ ինքնարժեք՝ 63 000 ՀՀ դրամ, շահույթ՝ 8400 ՀՀ դրամ և ԱԱՀ՝ 12 600 ՀՀ դրամ և ընդհանուր գին՝ 84 000 ՀՀ դրամ, այսպիսով՝ տվյալ գործարքի գծով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշվել է 12 600 ՀՀ դրամ, մինչդեռ ԱԱՀ-ի գումարը տվյալ դեպքում կազմում է 14 280 ՀՀ դրամ (ինքնարժեք՝ 63 000 + շահույթ՝ 8400 + ԱԱՀ՝ 20%): Այսինքն վերջինս գնային առաջարկի մեջ տվյալ գործարքի մասով վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշել է 1680 ՀՀ դրամ սահմանված չափից պակաս:

Ամփոփելով վերոգրյալը՝ արձանագրում եմ, որ Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանի կողմից ներկայացված գնային առաջարկի միայն 4-րդ չափաբաժնում է ճիշտ հաշվարկված տվյալ գործարքի գծով ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ-ի գումարը:

Միաժամանակ արձանագրում եմ, որ վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկում 1-3-րդ, 5-23-րդ չափաբաժինների մասով սխալ հաշվարկված ԱԱՀ-ի գումարի արդյունքում սխալ է հաշվարկված նաև գնային առաջարկի մեջ «ընդհանուր գինը»՝ 6-րդ սյունակում նշված գումարը, որը հաշվարկվում է 6=3+4+5 (ընդհանուր գինը=ինքնարժեք+շահույթ+ԱԱՀ) բանաձևով:

Այսպիսով՝ Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանվում է, որ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ ***եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան,*** բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Այսպես վերը նշված նորմը հստակ սահմանում է, որ այն դեպքում, երբ գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին, ապա այն ենթակա է մերժման և տվյալ դեպքում Կարգի 41-րդ կետով նախատեսված շտկման հնարավորությունը չի գործում:

Այսպիսով՝ գտնում եմ, որ Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանի կողմից գնային առաջարկում 1-3-րդ և 5-23-րդ չափաբաժինների մասով տվյալ գործարքների գծով ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ-ի գումարի սխալ հաշվարկման պայմաններում, որը հանգեցրել է նաև գնային առաջարկում «ընդհանուր գինը» գումարի սխալ հաշվարկման, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, բավարար գնահատելով վերջինիս հայտը, թույլ է տվել Կարգի 32-րդ կետի 2-րդ, 40-րդ կետի 4-րդ և Ընթացակարգի հրավերի 5.2-րդ ենթակետերով սահմանված պահանջների խախտում, ուստի գտնում եմ, որ նման պայմաններում «Լիդեր

Կոմպլեքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը 1-3-րդ և 5-23-րդ չափաբաժինների մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ի կողմից 14.01.2020թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի.

պարտավորեցնել «ՎՁՄԳՄԴ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/01» ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու նիստի թիվ 3 արձանագրությամբ Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը, բացառությամբ՝ 4-րդ չափաբաժնի մասով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**